

ՀԱՄԱՍՏԵՂԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Համաստեղը (Համրարձուժ Կելենյան, 1895–1966) գրականագիտական որևէ աշխատություն չի գրել, բայց նրա հոգվածներն ու գրախոսությունները, ելույթները, նամակները կօգնեն պարզելու, թե գեղագիտական ի՞նչ չափանիշներով է կողմնորոշվել ստեղծագործելիս կամ մյուսների երկերը քննելիս: «Մեր գրականությունը մեր հայրենիքն է»¹, – ասում էր Հ. Օշականը: Համաստեղն էլ է համաձայն, որ աշխարհասփյուռ հայություն համար գրականությունն իսկապես հայրենիք է, այլ խոսքով՝ հայի հոգևոր հարստության հավաքական պատկերը:

Համաստեղը չէր սիրում խոսել իր անձի և գրականության մասին. «Ձեռ կարծեր, որ ընթերցողներուն համար հետաքրքիր պիտի ըլլա»²: Նրա արխիվում պահպանվել են բազմաթիվ նամակներ, որոնցում տարբեր խմբագրությունների աշխատակիցներ կենսագրական տվյալներ և լուսանկարներ են խնդրել: Համաստեղը գրեթե միշտ խոսափել է նման հարցերից, մանավանդ լուսանկարվելու անհրաժեշտությունից: Ինչպես վկայում է գրողի ավագ գուստրը՝ Լորիկը, նա ստեղծագործում էր անաղմուկ, աննկատ. տպարանի ամերիկացի գործընկերներն այդպես էլ չիմացան նրա գրող լինելը, նույնիսկ աշխատասենյակ չառանձնացվեց, թեև ապրում էր երկհարկանի բնօրհան տանը:

«Կյանք և արվեստ» տարեգրքի 1933-ի համարում «Ինչպես կը գրեն մեր գրագետները» ընդհանուր խորագրի տակ ներկայացված են մի շարք գրողների պատասխանները հարցարանին: Համաստեղն իրեն հատուկ անկեղծությամբ ներկայացնում է գրական աշխատանքի հետ կապված մի շարք հարցեր: «Ամերիկայի մեջ ապրիլ ու տրամադրություն ճարել գեղեցիկ գրականություն ընելու ընկալական դժվար է: Երկաթներու աղմուկին մեջ ջուրակի ձայն փնտրելու պես ըան մըն է, – գանգատվում է նա: – Ինձի այնպես կը թվի, որ մինչև հիմա ըրած աշխատանքներս ոտքի վրա ըրած եմ: Գլխավոր բաղձանքս եղած է լայն սրտով սեղանի վրա ծռիլ ու միայն գրականությունով մտահոգվիլ: Է՛հ, բոլոր հայ գրողներու անկարելի բաղձանքը այդ եղած է»: Երկիրը, գյուղը հայրենիքից հեռու «աքսորականի մը պես» ապրող հայ գրողի համար երևակայություն չեն, այլ անձնական «նկարագիր դարձած» են: «Ավելի լավ, որ մարդ իր ապրած կյանքի մեջ բանաստեղծություն գնե, քան երևակայե ու գրի առնե: Եթե ինձ տային իմ երևակայության այդ շարժուն աշխարհը, այն ատեն թերես

1 Հ. Օ շ ա կ ա ն. Համապատկեր արևմտահայ գրականության. Հ. Դ, Երուսաղեմ, 1956, էջ 152:

2 Համաստեղի նամակներից և հոգվածներից մեջբերված հատվածներում կատարել ենք ուղղագրական և կետագրական որոշ փոփոխություններ: Ընդգծումները հեղինակինն են:

գրականությունը ընելու դժվարին ու անկատար աշխատանքին մեջ չէի իյնար», – բացատրում է Համաստեղը՝ կարծես պատասխանելով այն գրականագետներին, որոնք հետագայում նրան պիտի ներկայացնեն որպես ռոմանտիկ: Նա այս կարծ խոսքում էլ չի դիմանում գայթակղությունն ու ներկայացնում է գյուղական բնապատկերը (ինքը գրում է՝ «սկսա նաչխ բանիլ բառերով»):

4. Սասունին պատմում է, որ Համաստեղը մեկ-երկու մանրամասնով կարող էր ներկայացնել մարդու (անգամ՝ հարևան սեղանի մոտ նստած անծանոթի) բնավորությունը: «Պզտիկ մանրամասնություն մը» տեսնելու ու ներկայացնելու հմտությունը է պայմանավորված գրական հերոսի կերպարի հաջողությունը: Համաստեղը դժգոհում է, որ նոթագրելու սովորությունն չունենալու պատճառով շատ նյութեր են կորչում, մեռնում «այնպես, ինչպես շատ ցուրտ ձմեռին ճնճղուկ մը կը դողա պատուհանեդ դուրս, կտուցը ապակիիդ կը զարնե, ներս չես առներ ու առավոտուն պատուհանիդ տակ անոր փոքրիկ դիակը կը գտնես»:

«Գավառը և Թլկատինցին»³ ուսումնասիրությունը գրողի ջերմ ու անկեղծ խոսքն է իր գրական ուսուցչի և նրա վաստակի մասին: Թլկատինցի մարդու և գրողի համար, վկայում է Համաստեղը, տիպականը «հումորն» է, որի փայլուն օրինակն է Ռ. Ջարդարյանի՝ իր տաղանդավոր աշակերտի (և՛ ուղղակի, և՛ գրական առումով) «մուկերեն կրծոված Ֆեսի վյուսկուլի» հետաքրքիր մանրամասը, որը տպավորվում է ընթերցողի հիշողության մեջ՝ Թլկատինցու հումորի շնորհիվ: Համաստեղը հայ դասական այս գրողների ստեղծագործությունները ներկայացնում է տպավորիչ համեմատություններով. «Ջարդարյան մետաքսե նուրբ թելերով, գույներու մանրամասնություններով ասեղնագործող մըն է: Ջգույշ պետք է ըլլալ, որ չմաշվին իր թելերը: Ջարդարանքի համար կարելի է գործածել միայն և կամ սկիհներու վրտ ձգել: Իսկ Թլկատինցին, թևերը սոթթած և առնացի կազմով ու ուժով տեղկյահին առջև նստած, կտավ կը գործե, դիմացկուն կտավ: Իր կտավին վրա ձգված նախշերը հայկական ձևի ավանդական նախշեր են: Իր գործածած գույնը դիմացկուն ներկե շինված տեղական ապրանք է, այնքան դիմացկուն, որ ո՛չ արևը կը հանե և ո՛չ լվացքը»: Նա պնդում է, որ «գավառը միայն գյուղ չէ», ու ներկայացնում է Խարբերդ քաղաքը՝ «առևելյան ու հեքիաթային» նկարագրով, որին հակադրվում է «չարժուն ու աշխատող» գյուղի համայնապատկերը: Գյուղը ավանգապահ է, այստեղ ընտանիքը «գրեթե համայնական է», գյուղացիները «իրենց մեջ գաղտնիք չունին և կամ երկար չեն կրնար պահել իրենց գաղտնիքը»: Այս գյուղն է նկարագրել Թլկատինցին՝ շարունակելով Խրիմյանի ու Գ. Սրվանձայանի ավանգները: «Գավառի գրականությունը Թլկատինցիով հայտնություն մը չեղավ անշուշտ», – գրում է Համաստեղը ու մեկնաբանում, որ Թլկատինցին ծանոթ թեման, նյութը «կ'ըսեր ձևով մը, որ աննախընթաց էր»: Նա գյուղը կղզի չի համարում, քանի որ «գյուղին մեջ կան հիմնական նախանյութերը՝ սերը, ատելությունը ու նախանձը»: Ե՛վ գյուղում, և՛ քաղաքում մարդը նույնն է՝ «քիչ տարբերությունով», «բավական է, որ մարդը հոն է, ինչպես և կինը»: Ներկայացնելով Թլկատինցու մի քա-

3 «Հայրենիք», Բոստոն, 1928, № 6 և 7:

նի թատերախաղեր՝ Համաստեղը խոսում է այդ «դժվար արվեստի» մասին ու շատերի անհաջողությունն այդ ասպարեզում պատճառաբանում «չատ դյուրին» համարելու սխալով: Դրամայում նա արժեքավորում է գործողությունը (action), «ավելորդ տիպերով կամ խոսքերով միջոցը չլեցնելը», «ոճի արթնությունը» և «անհրաժեշտ հումորը», իսկ «զգացումները բացատրելով կամ պատճառաբանելով պետք չէ երևան բերել, այլ անոնք պետք է դուրս գան իրերու ներդաշնակ կամ հակամարտ բաղխումներեն»: Համաստեղը Թլկատինցու գրականությունն արժեքավորում է որպես հավիտենական ճշմարտություն, «և այդ արվեստն է գեղեցիկ գրականությունը»:

«Շրջանը և Բաֆֆին»⁴ Հայ դասական դրականության պատմության յայն կտավի վրա վիպասանի դրական ժառանգության դնահատման հետաքրքիր փորձ է: Համաստեղը սկսում է մեծ նորարար և Արդվյանից, որը «պայթեցուց առաջին ուղմբը իր «Վերք Հայաստանի»-ով՝ գրականություն բերելով «ժողովուրդն ու շրջանը»: Արդվյանի վեպը նա անվանում է «Թե՛ մեր լեզվին, թե՛ գրական ձևին, թե՛ ընկերային և թե՛ քաղաքական կյանքին մեջ» հեղափոխություն: Մեկ առ մեկ արժեքավորելով մեծ լուսավորչի հետևորդների դործը՝ Համաստեղն առանձնացնում է Գր. Աբրուսնու «Մշակի» շուրջը համախմբված մտավորականների, հատկապես Բաֆֆու գրական վաստակը: «Ցեղի կախարդական» ոգու որոնումների մեջ «մոռացված էր էն կարևորը՝ նրկիրն ու Հայ ժողովուրդը»,— դրում է նա: Ու այդ բացը լրացրեց Բաֆֆին՝ «հաստակազմ, մազոտ թևերով ջուլ-հակի մր պես» սկսելով «տնային, տեղական կտավի աշխատանքը, մինչ սյուսահայերը փափուկ բարձերու վրա կոթնած տանթելներ կը հյուսեին ֆրանսական մետաքսի վրա»: Նա գիտեր, որ «ցեղի նկարագիրը նույն ինքը ժողովուրդն է իր սեփական հողին վրա: Նույն ժողովուրդեն դուրս ելած հերոսներն ու տագանդները եղած են իսկական արտահայտիչը ցեղային նկարագրին», և Բաֆֆին ներկայացրեց այդ ժողովուրդին, նրա պատմական ու ժամանակակից հերոսներին, ամբողջացրեց «բունակալության ներքև աղջատված հայուն նկարագիրը»: Գրողի աննախադեպ հաջողության հիմքը հավատն էր՝ «Հայր մի ըխտավոր ապագա ունի»: Բաֆֆին «առավելապես ուժեղ հավատավոր դարձած էր Հայոց պատմությունով, այնպես, ինչպես ուղղափառ քրիստոնյա մը Սուրբ Գիրքով»,— գրում է Համաստեղը: «Սամվել»-ը նա անվանում է «չատ հանդուգն վեպ մը», որից չի կարելի կատարելություն պահանջել: Բաֆֆու մեծությունը, նրա գրականության անանցանելի արժեքը սա է. «Բաֆֆի մեծ եղավ, որովհետև ստեղծեց շրջան մը, սերունդներ շարժման մեջ գրավ, հայ ցեղին անհատականություն ու նկարագիր տվավ»:

Ինչքան ալ փոխված ըլլան դրական ճաշակները, մենք այսօր, հիսուն տարի հետո ևս, Բաֆֆի կը փնտրենք ու կը կարգանք մեծ հաճույքով, որովհետև ան մերն է, մեր միսեն ու ոսկորեն»:

Համաստեղի հետաքրքիր հոգվածներից է Գր. Զոհրապին նվիրվածը⁵: Արևմտահայ գրականության պատմության մեջ նա հատուկ արժեքա-

4 «Հայրենիք», 1939, № 3:

5 «Նաիրի», Բեյրութ, 1961, № 29:

վորում է Հ. Պարոնյանի գերը, որը «հակառակ իր քաջքշված կյանքին՝ ուժեղ լավաանս մըն էր փրկելու համար լավը, ինչպես իրմե հետո եղավ Ջոհն Րապը՝ ինքնուրույն ոճով և արվեստի նուրբ տաղանդով» իր մեծ նախորդների ավանգները շարունակողն ու հարստացնողը: «Ջոհն Րապ մեր դրականության մեջ բերավ հանդգնություն, անկեղծություն և իրավ աշխարհաբար: Ահա ինչ որ կ'ակնկալվի իրավ արվեստագետն մը»,— դրում է Համաստեղը՝ ընդգծելով մեծ նովելագրի՝ ամեն գոյություն մեջ իմաստ տեսնելու «առավելապես մարդկային» հատկությունը: Արվեստագետն ինքնատիպ է իր ոճով, իսկ Գր. Ջոհն Րապի ոճը «ինքն է, իր մարմնեն և ոսկորներեն շինված», ու դրա շնորհիվ «բառերը գույն ունեն, կը մտածեն, կը քալեն կիրթ զինվորներու պես՝ առանց ավելորդ և սխալ քայլերու»: Նա Ջոհն Րապի ոճը բնութագրում է այսպես. «Երբ պատմվածք մը կը սկսի, արդեն բռնած, պաշարած է ընթերցողը: Վարպետ է, երբ նկարագրի, զիմանկարի ուժեղ գիծեր կու տա և նույն կոկիկ ոճը կը տեսնենք խորհրդածություններուն մեջ, և դժվար թե կարելի է վերցնել բառ մը»:

Նորավեպի ժանրային առանձնահատկությունները Համաստեղը ներկայացնում է այսպես՝ «տրամաթիք ամբողջականութենե» հրաժարվելը՝ «ձգելով տյգ ամբողջությունը վեպին» և «ամբողջեն միայն գիծ մը» մշակելը: Այս իմաստով նա բերում է Ա. Չեխովի օրինակը, որը «գրեթե ոչինչ են էր, որ կը ստեղծագործեր»: Գրականագետ Գր. Հակոբյանը Համաստեղի այս հոգվածի մասին դրում է, որ «առանձնանում է այն հանգամանքով, որ նա Ջոհն Րապի նորավեպագրությունը քննում է հայ գրականությունից սլատմական համապատասխանում, անդրադառնում ոճի, պատկերաստեղծությունից խնդիրներին, ժանրի կառուցվածքային մասնահատկություններին»⁶:

«Կ. Սասունիի «Գրական գոհարներ» գրքին առիթով»⁷ հոգվածում Համաստեղը մանրամասն վերլուծում է հայ գրականության պատմության, գրական հայերենի ձևավորման ընթացքը՝ դրսևորելով նյութի լավ իմացությունը⁸: «Եթե այժմ ունինք հարուստ լեզու, ունինք նաև հարուստ գրականություն»,— դրում է նա և այսպես գնահատում Կ. Սասունիի կազմած հատորյակը. «Հայ ուսանողը, ինչքան ալ սորվի Շեքսպիրը գոց արտասանել, միշտ ալ պիտի մնա խեղճ, ստորադաս և արգահատելի, եթե տեղյակ չէ իր ազգային հոգեկան հարստության»: Նա պնդում է, որ «ազգն ալ թոք ունի և սիրտ», և «հոգեպես հարուստ է այն ժողովուրդը, որ իր ետև ունի հարուստ զիցաբանություն», ու բերում է մեր ժողովրդի օրինակը, որը «ուրիշ կարևոր ազգերու նման ունեցած է զիցական հարուստ պատմություն»:

6 Գր. Հ ա կ ո բ յ ա ն. Արևմտահայ նորավեպը (1890-1910-ական թվականներ, ժանրի պատմություն և տեսություն). Երևան, 1996, էջ 27:

7 «Հայրենիք», 1951, № 3:

8 Համաստեղի արխիվում և մեր խնդրանքով Լորեմտա Համաստեղի՝ Երևան՝ Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ) ուղարկած նյութերում պահպանվել են հայ միջնադարյան մշակութի, գասական գրողների գրական ժառանգության, հայոց լեզվի վերաբերյալ տասնյակ ձեռագիր էջեր: Ենթադրում ենք՝ գրանք ծավալուն ուսումնասիրության պատրիկներ են: Այգ են հաստատում նաև Հ. Խաչատրյանի նամակները. նա Համաստեղին հաճախ էր հանդիմանում, որ նրա գործը գրականագիտությունը չէ, այլ ստեղծագործելը:

Արամ Հայկազի գրական հորելյանի առիթով գրված նամակում⁹ Համաստեղը բարձր է գնահատում գրչեղբոր ջանքերը՝ «Ամերիկայի երկաթի նման ծանր պայմաններուն մեջ» «Հացի պարտագիր աշխատանքին» գեղեցիկ գրականութուն Համաստեղելու հարցում: Նա մանրամասն ներկայացնում է գրողի ոճի իր պատկերացումը. «Իրական գրողի մը համար էականը ոճն է, որ ինքնին արվեստի կեսն է: Ոճը կ'արտահայտե նկարագիր ե մանտվանգ վստահ ճամբա: Եթե գրողի մը մոտ պակաս է ոճը, ուրեմն կամ ինքզինքն է, որ կը կրկնի և կամ ուրիշ մը: Ոմանք գիտեն լավ պատմել, կրնան իրենց մտածումներն արտահայտել քերականական ճշգրիտ հայերենով, և սակայն կը պակսի արվեստը, որ ինքնին անկեղծութուն է, ուր կարելի չէ թաքցնել հոգեկանը»: Արամ Հայկազի օրինակով Համաստեղը գրականութունը բնորոշում է որպես անկեղծութուն: Անդրադառնալով սփյուռքահայ գրականության ապագայի հարցին՝ նա կրկին ընդգծում է Հայաստանի հետ «աղատ և ուժեղ կապեր» հաստատելու հրամայականը, քանի որ «գալիք հայ գրողը չպիտի կրնա պահել մեր աղղային նկարագիրը»:

«Միջնաբերդի» հարցարանը՝ շարքում տպագրված են Համաստեղի պատասխանները¹⁰: Նա ցավով է արձանագրում սփյուռքահայ գրականության տխուր վիճակը. «Արգեն մի քանի տարի է, որ Ափյուռքի գրականութունը ինքզինքը կը կրկնե, ու չկան նորեր»: Պատճառը Հայաստանի հետ «կապ ու ճամբա» չունենալն է: Գրողը «մեծ կարծիք» չունի «օտար լեզվով և միայն ծագումով հայ» այն գրողների մասին, որոնք հայկական ողին և մշակույթը՝ չեն մշակում. «Վերջե մը շատ ավելի արժեք է, քան Մայքլ Արլենը: Սարոյան այնքան ավելի արժեք է, ինչքան որ պահե հայկական երանգը իր անմեղ անկեղծությամբ»:

Համաստեղն անդրադառնում է նաև Հայրենիքի գրականությանը, խոսում երկրում ստեղծված «աղատ» քննության մասին: «Եթե քիչ մը ավելի տանելի պայմաններ տրվին Հայաստանի մեր գրողներուն, մենք շուտով կրնանք տեսնել նոր վերելք մը ոչ միայն մեր գրականության, այլև ըլլոր ասպարեզներուն մեջ», — համոզված է Համաստեղը: Հավատարիմ մնալով գրականության՝ «անկեղծ ու ազնվական» լինելու իր պահանջին՝ գրողը հայ գրականության ապագան տեսնում է Հայաստանում. «Ինչ ալ ըլլա, հոն է մեր հույսը և մեր կորիզը: Հայաստանեն պիտի գան մեր ազգային տաղանդները: Հոն, ժողովուրդին և հողին մեջ է սաղմը մեր ազգային երազներուն»:

«Ակոսի»՝ 1957-ի № 1-ում տպագրված է Համաստեղի «Կարծիք Մ. Իշխանի «Հացի և սիրո համար» վեպի մասին» գրախոսականը: «Գիրքը գրիս այնքան սլաշարեց, որ մեկ նստելով լրացուցի: Երկար ատեն էր, որ կարոտն ունեի հայերենով լավ գիրք մը կարգալու: Լավ բան կարելի է կարդալ օտար լեզուներով, և սակայն զիս չեն գոհացներ: Լավ գիրք մը կարդալ հայերենով, մեր լեզվի ջերմ ու գեղարվեստական արժեքով, ուրիշ հաճույք է ինձի համար, ինչպես ուրիշ է հայկական թոնիրներեն ելած հացին,

⁹ Հորելյանական հանդիսություն Արամ Հայկազի հիսնամյա գրական գործունեության. Նյու Յորք, 1972:

¹⁰ «Միջնաբերդ», Բեյրութ, 1957:

մեր հացին համն ու հոտը: Գիրքդ ինձի այդ հաճույքը տվավ», – գրում է Համաստեղը: Նա համոզված է, որ «որևէ հաջող բանաստեղծ, ատեն մը վերջը, ենթակա է ինքզինք կրկնելու», և խրախուսում է գրչընկերոջ առաջին փորձերն արձակում: Մ. Իշխանի վեպում նա հատկապես շեշտում է սիրային պատմության հենքի վրա սյուժետային գիծը զարգացնելու հաջողությունը: «Ինչպես բոլոր վեպերուն մեջ, սերերը առհասարակ առիթներ են միայն կյանքի զանազան երեսները տալու», – գրում է Համաստեղը: Ամենակարևորը «Վեպդ շատ կոկիկ տպված է և աղվոր հայերենով, տիպերը կյանքոտ են և իրական: Չափի տակ պահված են խորհրդածությունները և նկարագրությունները: Այդ բոլորը ուժեղացրած են վեպիդ թեքնիքը»:

Համաստեղի նամակներում կան բաղմամբիվ հատվածներ, որոնցում նա վերլուծում է Ա. Հայկազի, Հ. Ավագյանի, Ա. Պետիկյանի, Դևի, Կ. Զարյանի և մյուսների ստեղծագործությունները:

Համաստեղը համոզված էր, որ իր տեղը Հայաստանն է: 1926-ի դեկտեմբերի 26-ին նա գրել է Ավ. Իսահակյանին. «Նամակներեգ մեկին մեջ հիշած էիք, որ ես ալ Հայաստան մեկնիմ: Որքան կարոտն ունիմ տեսնելու Հայաստանի գյուղացուն փոթփթած գեմքն ու արևեն այրված ճակատը: Կր զգամ, որ հոս, ուրիշներու երկրին մեջ, խորթ մոր ձեռքին տակ շատ բան չունիմ ընելիք: Քանի (անրնթ.–Մ. Խ.) այս որբությունը: Մտազրած եմ Ամերիկայեն գուբս ելել: Այս երկաթներու երկիրը մնալ ինձի համար այլևս ձանձրացուցիչ է: Շատ պիտի սիրեի Հայաստան գալ: Մամուլին հանձնած Ձեր տպավորությունները զիս ավելի վճռական կը գարձեն: «Գյուղին» երկրորդ հատորը կ'ուզեմ Հայաստանի մեջ հրատարակել: Արգյոք հնարավոր է:

Իմ Հայաստան գալու մասին առանձնապես կը սիրեի Ձեր թելադրությունները իմանալ: Շիրվանզագեթին տեսնելու որ ըլլաք, հաճեցեք բարևել իմ կողմեն»¹¹:

Ճիշտ է, Համաստեղը հաճախ է գժգոհում նամակ չգրելու իր «անբուժելի թեմպելություն»-ից, բայց պահպանված նամակները բավարար են նրա գեղագիտական հայացքների վերաբերյալ լրիվ պատկերացում կազմելու համար:

«Գրականությունը սկսած եմ բանաստեղծություններով՝ արձակ թեոտանավոր, «Փյունիկին» մեջ: Առանձինն հատոր մը կ'ըլլան այդ բանաստեղծությունները, տեսակ մը մարզանք սիմպոլիզմի և շրջանի նորարար ձևերու, մինչև որ օր մը հայտնության պես գտա մեր գյուղը և գավառը»¹², – գրել է Համաստեղը Բ. Նուրիկյանին: Բանաստեղծական փորձերը նա անվանում է «կապույտ թռչունի մը փնտրտուք», «բանաստեղծական մարզանքներ», որոնք տարիներ անց էլ կարդում էր հաճույքով: Հանրահայտ է՝ Ալ. Շիրվանզագեթի խորհրդով Համաստեղը վերերկրային ոլորտներից վար իջավ ու գեանի վրա ամուր կանգնեց, ինչպես ինքն է ասում: Կարելի է համոզված պնդել, որ խիզախություն էր թեմայի, ժանրի, ոճի այս-

11 ԳԱԹ, Ավ. Իսահակյանի Ֆոնդ, № 1326:

12 ԳԱԹ, Բ. Նուրիկյանի Ֆոնդ, № 11:

սիսի կտրուկ փոփոխությունը, իսկ «գեղեցիկ բաները հանդգնութենեն կը ծնին»¹³:

Համաստեղը չէր սիրում գրականության ու գրողների բաժանումները, «գյուղագիր» և «գյուղագրություն» անվանումները: Հովհ. Ավագյանին ուղղված նամակներից մեկում նա գրում է. «Գյուղագիր» որակումը Փարիզի մեր նորելուկ աքաղաղներեն դուրս եկավ, անոնք, որոնք ուզեցին նորեն ֆրանսական ձևերը ընդօրինակել և Հայ արժեքներուն վրա վերեն նայել: Այդ հին ցավ է և գաղութաձայ գրականության մեկ հիվանդությունը: Թվատինցիի և Զարդարյանի օրով չկար այդ բառը, որովհետև այն օրերուն անոնց արժեքը ըմբռնողներն ավելի պատրաստված և լուրջ գրագետներ էին ու չավուկ մը միայն հասկցան, որ Հայ ժողովուրդը, Հայաստանը գավառ է ու գյուղ: Այդ գրականությունն է, որ հատուկ լեզվով ունի ուժ ու նկարագիր»¹⁴:

«Ղարիպականի» կարոտով Համաստեղը ձգվում էր դեպի Հայաստան ու խանդավառվում Հայ գրողների ամեն մի հաջողությամբ: Համոզված, որ «իր ներշնչումի աղբյուրը Հայ ժողովուրդը» դարձրած գրականությունը «նաև սիսի պահե Հայ Սփյուռքը»¹⁵: «Մեր ազատ մտածողությունը Սփյուռքին մեջ օդ շնչելու պես բան մը եղած է, այնքան բնական, և տակավին մենք չենք կրնար ըմբռնել, թե չորս գործողության ինչ բարդ հաշիվներ կան այնտեղ»¹⁶, – գրում է նա Արամ Հայկազին: Համաստեղի ստեղծագործություններն էլ հայրենիքում ենթարկվում էին նման «հաշիվների», բայց անխախտ էր նրա այն համոզումը, թե «մեր կապը անհրաժեշտ է Հայաստանի ու Հայ ժողովուրդին հետ անկախ ուժիմեն»¹⁷:

Հայաստանը Համաստեղի համար ամեն ինչից անկախ և ամեն ինչից առաջ Հայն ու հայությունը պահող Հայրենիք էր: Նա ապրեց ու մինչև կյանքի վերջ մնաց «հավատավոր դաշնակցական» (իր բառերն են. այսպես է նա բնութագրել Գ. Նժդեհին – Մ. Խ.), մտերիմ էր ՀԹԴ ականավոր շատ գործիչների հետ, բայց հեռու էր իրականությունը չտեսնելու, խեղաթյուրելու չարամիտ կեցվածքից: Համաստեղը մտովի առանձնացնում էր «Խորհրդայինը»՝ յուրովի շրջանցելով քաղաքական ու կուսակցական հակասությունները: Գրական պատկառելի վաստակից բացի նաև այս գիրքորոշումն էր պատճառը, որ գրողի հոբելյանը տարիներ անց դարձավ համահայկական, համաժողովրդական գրական տոն: «Հոսաբերի»՝ 1966-ի սեպտեմբերի 10-ի համարում կարգում ենք. «Ուրախությամբ հաստատեցինք, թե այս գտարյուն արվեստագետը՝ Համաստեղ, այն քիչերեն է, եթե ոչ միակը, որ համակրանքի, սիրո ու գնահատանքի լայն մթնոլորտ մը ստեղծած է իր անձին շուրջ թե՛ Երկրի և թե՛ Արտերկրի մեջ»:

Հայրենի հողի՝ պաշտամունքի հասնող սերն արյան կանչ էր ու ընօրրան վերադառնալու կենդանի հույս՝ հակառակ հային Հայաստանից բաժանող արգելքների ու վարագույրների: Հետաքրքիր մի փաստ՝ Համաստեղը

13 Հուլիսյանում Լ. Հ. Դաշնակցության (1890-1950). Բոստոն, 1950, էջ 340:

14 ԳԱԹ, Լ. Ավագյանի ֆոնդ, № 1341:

15 «Միջնաբերդ», Բեյրութ, 1957:

16 ԳԱԹ, Արամ Հայկազի ֆոնդ, № 222:

17 ԳԱԹ, Դևի ֆոնդ, № 335:

տեղի առաջին՝ «Գյուղը» ժողովածուի մասին դրախոսականներն ավարտվում էին նույն մաղթանք-ցանկութամբ. Ռ. Դարբինյանը խորհուրդ էր տալիս «օր առաջ երթալ Հայաստան»¹⁸, իսկ Ա. Չոպանյանը գրում էր. «Հայաստան է իր տեղը»¹⁹:

Խորհրդահայ գրականության գրույթներն ու սկզբունքները հայտնի էին Համաստեղին: Ջարմանալի հեռատեսութամբ նա 1935-ին գրում էր, որ հավատում է «միջուկով ազգայնական» գրականության ծաղկմանը Հայաստանում՝ հակառակ «արգելարանի մեջ» փակված պրոլետարականի: 1920–30-ական թվականների խորհրդահայ գրականությունը տարիներ անց անվանում էր «ոչլուտ լաթի մր» կտոր՝ համոզված, որ «Հայաստանի մեջ ինչքան ուժեղանա Հայկականությունը, այնքան հետզհետե մաշումի կ'ենթարկվի սա օտարը «խորհրդայինը»²⁰: Այս չափանիշներով էր Համաստեղը քննում գրական երկերը, և հասկանալի պատճառներով դրանցից քչերն էին գոհացնում նրան: Այն տարիներին, երբ խորհրդահայ գրականությունն ուներ երկու նպատակ՝ «Նարեկական փառաբանությունն ընել բռնակալին և դաշնակցության հայհոյել»²¹, խոսք անգամ չէր կարող լինել հայկականության մասին, որը Համաստեղը համարում էր Հայրենիքի ու Սփյուռքի միջև արհեստականորեն ստեղծված «կիրք ու նախապաշարումի» վերացման, ազգային ավանդների վերականգնման միակ պայմանը: Նա քաջ գիտակցում էր, որ Հայրենիքից կտրված Սփյուռքը չի կարող «Հայ ժողովուրդին հայրենասիրական քարոզներ» կարդալ, «երբ մենք կը հեռանանք հետզհետե»²²:

Համաստեղի գրական սկզբունքները հակառակ էին պրոլետարական հույսով զերհանության դավանանքին: Իրական դժոխքով անցած «ամեն Հայ հերոսական դրվագներու մատյան մըն էր» նրա համար, իսկ «Հայ ազգը իր ուրույն աշխարհը ունի, ուրիշ ազգերու չի նմանիր, հայ գրականությունն ալ պետք է հառազատ արտահայտիչը ըլլա այդ աշխարհին և ուրիշ գրականության պետք չէ նմանի»²³: Գերիսնդիբը «մեր ցեղի ողջ բնագործ» կենդանի պահելն է՝ հակառակ «օդապարիկներու նման միշտ գետնեն վեր» սավառնող նոր սերնդի, որ «գերմանական և ֆրանսական երևակայությունով իր գլուխը լցրեց»: Մեր ազգի այդ առողջ ոգին Համաստեղը համարում էր գոյության կռվան ու գրավական, «որովհետև ան այնքան անմատչելի է, որքան երկինքը: Մեր թշնամիները այդ երկինքին պիտի չկրնան հասնիլ»²⁴:

Համաստեղը միշտ ուշադիր հետևում էր հայրենիքի գրականության ընթացքին: «Կը հետևեամ Չարենցին և Բակունցին: Առաջինը արդեն հոգնած է: Էն ո՞վ չի հոգներ միշտ միևնույն ճախարակը դարձնել»²⁵, – գրել է Համաստեղը Կ. Սիտալին 1935-ի փետրվարի 2-ին: Հանրահայտ է,

18 «Հայրենիք», 1924, № 5:

19 Ա. Չոպանյան. Երկեր. Երևան, 1988, էջ 765:

20 ԳԱԹ, Գ. Մահարու ֆոնդ, № 226:

21 Նույն տեղում:

22 ԳԱԹ, Հ. Խաչատրյանի ֆոնդ, № 421:

23 «Հուսարբեր», Կահիրե, 1929, մայիսի 21:

24 Նույն տեղում:

25 ԳԱԹ, Կ. Սիտալի ֆոնդ, № 151:

որ Ափյուռքի որոշակի հատվածի համար Չարենցն առաջին հերթին պրոլետարական գրականության հիմնադիրն էր: Այնինչ մեծ ժամանակակից պարզապես հրաժարվել էր «նոր» գրականությունը ստեղծելու անպտուղ փորձերից, վերագարձել դասական գրականության ավանդներին: Քաղաքական պայքարի պղտոր միջավայրում հաճախ էին անտեսվում գրական իրական արժեքները, բայց այս դեպքում գործ ունենք պարզապես չիմացություն հետ: Համաստեղը, որը «Ստալինը փառաբանող «մեծատաղանդներեն» չէր», դրված անձանոթ էր խորհրդահայ ընթերցողին, իսկ Չարենցի վերջին ժողովածուները լույս տեսնելուն պես օրենքից դուրս էին հայտարարվում: Հետո էլ էր և արյունոտ 1937-ը...:

Համաստեղը «եղբայրակցություն մը» ուներ Ակսել Բակունցի հետ: Իր «շատ տաղանդավոր» ժամանակակից մասին նա գրել է. «Շատ պիտի ցավեմ, եթե օր մը իմանամ, որ սպաննած են այն տաղանդը: Ան ընդունակ էր մեծ և անկախ դորձեր տալու»²⁶: Հետագայում, երբ Գ. Մահարու նամակներից իմացավ, որ Չարենցն ու Բակունցը ծանոթ են եղել իր գրքերին²⁷, ցավով գրեց. «Մեր սիրելի Բակունցը մեռավ և սակայն չի պարտվեցավ: Անոր մեջ թաքնված շատ գանձեր կային, որ իր հետ կորսվեցան: Այդ կորուստին համար կը ցավինք և հետո ան իրավունք ունենա պարելու, եթե նույնիսկ չտալանն ըլլար Հայաստանի լեռներուն: Չարենցը գրեթե սպառած էր ինքզինք, տվավ իր բոլոր գանձերը, իր հետ շատ բան չի տարավ, և արդեն Բակունցի գրականության մեջ կը տեսնեի անոր դեմքը մտածումով ծանրացած, անոր լավ ու թախճոտ աչքերը և մանավանդ ուժեղ նկարագիրը»²⁸: Անշուշտ ճիշտ չէ Համաստեղի վերջին պնդումը Չարենցի մասին: Երկաթե վարագույրով բաժանված Հայրենիքի գրական արժեքների չիմացությունից է ծնվել այս միտքը և ոչ թե ինչ-ինչ քաղաքական հաշիվներից: «Վա՛յ անոնց, որոնք ընդունակ են ծայրահեղորեն նախապաշարվիլ հանկարծ»²⁹, – գրել է Համաստեղը՝ պաշտպանելով գրականության մասին աղատ խոսելու իր իրավունքը: Ավելի ուշ Համաստեղը գրում էր. «Կը սիրեմ այն առողջ թափը, որ կա Հայաստանի գրողներուն մեջ»՝ նկատի ունենալով Գ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի պատմավեպերը. չէ՞ որ նրանք ստեղծագործում էին «մոռացած այնտեղի մեծ իրականությունը»³⁰: Հայրենասիրությունը «դասակարգ չունի, մանավանդ Հայ Հայրենասիրությունը»³¹, բացատրում էր Համաստեղը, իսկ «իր ինքնությունը և նկարագիրը պահելու համար» անհամար զոհեր տված հայ ժողովրդի ոգու արմատները սնում են ապագայի հեռանկարը, որը վեր է կուսակցական ու քաղաքական պայքարից:

Ժամանակն ապացուցեց Համաստեղի՝ հայ ժողովրդի ու ազգային գրականության զարգացման, գալիքի մասին հայտնած մտքերի ճշմարտա-

26 ԳԱԹ, Հ. Ավագյանի ֆոնդ, № 1341:

27 Համաստեղի և Գ. Մահարու նամակագրությունից մի հատված լույս է տեսել «Սովետական գրականություն» ամսագրի 1983-ի № 8-ում: Նամակների ձեռագրերը պահվում են ԳԱԹ-ում՝ Համաստեղի ֆոնդ, № 220 և Գ. Մահարու ֆոնդ, № 226:

28 Նամակն ամսագրում հրատարակվել է առանց այս հատվածի:

29 ԳԱԹ, Կ. Սիտալի ֆոնդ, № 151:

30 ԳԱԹ, Հ. Ավագյանի ֆոնդ, № 1341:

31 ԳԱԹ, Կ. Սիտալի ֆոնդ, № 151:

ցիտեթյունը, քանզի անսխալ էր չափանիշը՝ «երբ գրականության մասին է, կը սիրեմ կարծիքներուս մեջ անկախ ըլլալ»³²։ Նրա ներշնչանքի միակ աղբյուրը Հայ ժողովուրդն էր, որին միշտ հավատարիմ մնաց խուսափելով օրվա պահանջով թելադրված անցողիկ հարկադրանքներից։ «Կրնամ ձախողած ըլլալ, բայց ես ճիգ րրած եմ տալու մեր հայրենի հողի բուրմունքը ու ժողովուրդի շունչը։ Այստեղ ենք ես ու դու և մեր Հայ գրականության մշակները»³³, – գրել է նա Գ. Մահարուն։ Իրականության և գրականության մեջ ստեղծված արհեստական ռաժանունը ցավ էր պատճառում գրողին. «Այժմս եղած տարբերություններուն մեջ Հայ ժողովուրդը կը կիսվի»³⁴։ Ազգային նկարագրի պահպանման համար նա քաջության կոչ էր անում. երկրում համընդհանուր դարձած վախը հաղթահարելու ուրիշ միջոց չկար։ Ատեղծագործությունը համարելով մարդու ազատության գրաստրուս՝ նաև դրանով էր պատճառաբանում խորհրդահայ գրականության «գույներու միօրինակությունը», որ կհաղթահարվի մեր ժողովրդի «ազգային ըմբռնումին մեջ ուժեղ մարդկայինի ու մշակութայինի» շնորհիվ։ Համաստեղը ծաղրում էր քննադատի «Գյուղը» ժողովածուում պըղտարական տարրեր որոնելու ջանքերը. «Այս մարդիկ իրենց ակնոցները ե՞րբ պիտի փոխին կյանքին վրա բազմակողմանի կերպով նայելու համար»³⁵։

Ամերիկայի մի անկյունում հայ գյուղացու և հողի աշխատանքով շնչող, ապրող հայն այդպես էլ չհաշտվեց «երկաթներու երկրի» իրականության հետ։ Հայրենիքի կարոտին գումարվում էր ֆիզիկական ծանր աշխատանքը տպաբանում, ու երազ էր դառնում «ամբողջությանը ինքզինք» գեղարվեստական գրականությանը նվիրելու ցանկությունը։ Թվում էր՝ Հայաստանի գրողներն ավելի բախտավոր են, բայց Համաստեղը լավ գիտեր՝ ինչպիսի արգելքներ կային այնտեղ։ Համընդհանուր «չորության ու ցամաքության» մեջ նրա ուշադրությունից չէին վրիպում «կարոտի մը պես նոր սկսած բանաստեղծության թափը», «նույնիսկ, ո՛վ հըաշք, սիրային քնարական մի քանի սիրուն կտորները», որոնք անշուշտ «կ'ենթարկվին խիստ քննադատության»³⁶։ Հեգնելով իր հասցեին արված քննադատությունը («որպես թե մենք հինով կ'զբաղվինք ու կ'անտեսենք ապագան») նա գրում էր. «Տեղն է հարցնել, թե ո՞ր մնաց Չարենցը, երգիչը գալիքին ու ապագային։ Եվ այդ ձևով փճացուց ինքզինքը։ Եվ ըսել, որ էդ ապագա կերտող ռեժիմին ներքև կարևոր գրողներ «Վարդան»-ով և «Պապ թագավոր»-ով կ'զբաղվին։ Շատ կը վախնամ, որ նոր մեջտեղ ելած աշուղական նախշուն ութմով Հայրենիքի սերը երգող լեզուները ցամքին հանկարծ»³⁷։

Հայրենիք գալը Համաստեղի ամենամեծ երազանքն էր. այդ են վկայում նրա տասնյակ նամակներ՝ 1920-ական թվականներից սկսած

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

35 ԳԱԹ, Հ. Ավագյանի ֆոնդ, № 1293։

36 Նույն տեղում։

37 ԳԱԹ, Հ. Ավագյանի ֆոնդ, № 1312։

մինչև կյանքի վերջը: «Վստահ եմ, որ Հին հունական դյուցազունին նման (կարծեմ ոռուսներն ալ ունին նման դյուցազուն մը) եթե կոնակս Հայաստանի հողին տամ, նոր ուժ պիտի ստանամ»³⁸, – գրել է նա Գ. Մահարուն: Հայաստանը նրա համար սրբավայր էր, և այդպես էլ չհաշտվեց որպես զրոսաչրջիկ Հայրենիք գալու մտքի հետ, թեև ունեցավ դրա հնարավորությունը: Պակաս գեր չխաղացին կուսակցական ընկերների կարծիքները, Հայաստանի պետական այրերի ու Գրողների միության սառը վերաբերմունքը, «անկախ ըլլալու» ցանկութունը, իսկ ավելի ուշ՝ կնոջ մահն ու իր առողջական վիճակը: Համաստեղն իրեն անվանում էր Հայրենիքում «անտեսված մեկը», որը տեղ չէր գտել սփյուռքահայ միջակ ու սկսնակ «բացառիկ տաղանդների» շարքում:

Հայրենի հողին կապող օղակ էին Ամերիկա հասնող մամուլն ու գրքերը, որոնց պակասությունից հաճախ էր դժգոհում: Համաստեղի ուշադրությունից չվրիպեցին ազգային ոգու արտացոլման առաջին փորձերը խորհրդահայ արձակում: Այսպես՝ Լ. Ղուկասյանի «Ոսկան Երևանցի» վեպի մասին գրեց ծավալուն գրախոսական (ստորագրված է՝ Օհան Մոսիսի): «Մենք կը հավատանք հայկականին, որովհետև տառապանքը, պայքարը, հավատքը Հայ ժողովուրդին տված են համամարդկային գիծ և հոգեկան լիութուն»:

Հայ գրողը չի կրնար հեռանալ իր հայրենիքեն: Ան իր հողին է ու մարմինը»³⁹, – դրում է Համաստեղը: Ավելի ուշ՝ 1965-ի հունվարի 25-ին, նա գրել է Արամ Հայկազին. «... արդեն Հայաստանի դրականությունը ավելի առողջ ճամբու մեջ մտած է – գացած է ժողովուրդին: Ես ինքս ալ սիրեցի «Նահապետը»: «Նահապետեն» առաջ այն շնորհալի սասունցի ինչիկ Դաշանցի «Խողեղան» կար: «Նահապետը» նույն գծով տարված է: Ինչ ալ ըլլա, սիրելի՛ Արամ, «Խողեղանով» և «Նահապետով» և մանավանդ բանասիրական աշխատանքներով այնտեղ լավ բաներ կը կատարվին շնորհիվ Հայ ժողովուրդին»⁴⁰: Հայ ժողովուրդի մեջ «թաքնված հզոր ուժը» հատկապես բուռն դրսևորվեց Մեծ Եղեռնի հիսնամյակի օրերին, երբ «լավագույն և ուժեղ կամուրջ» ստեղծվեց Սփյուռքի ու Հայաստանի միջև:

Նամակներում Համաստեղը հաճախ էր դժգոհում, որ հայրենիքում իր երկերը չեն հրատարակում: «Քարի պես կարծրացած են այնտեղ իմ գրականության հանդեպ, ավելի ճիշտ իմ դաշնակցական ըլլալուս համար»⁴¹: Հավելենք՝ գրողի կենդանության օրոք խորհրդահայ մամուլում լույս է տեսել միայն «Չալո» պատմվածքը⁴²: Նա ցավով էր խոսում «սովորական կասկածներին» մասին: Ինչ իմանար, որ սովետական երկու զրոսաչրջիկներին՝ Ռ. Գրիգորյանի և Ստ. Վարդանյանի հետ հանգիպումն իր տանը, հարցաքննության շեշտեր ունեցող զրույցը, հետագայում նաև նրանցից մեկի հոգևածը⁴³ կհաստատեն այդ «կասկածները»: «Բարեբախ-

38 ԳԱԹ, Գ. Մահարու ֆոնդ, № 226:

39 «Հայրենիք», 1963, ապրիլի 7–11: Գրախոսականը լույս է տեսել նաև «Սփյուռքի գրողները սովետահայ գրականության մասին» գրքում (Երևան, 1980, էջ 70–77):

40 ԳԱԹ, Արամ Հայկազի ֆոնդ, № 222:

41 ԳԱԹ, Լ. Իսախանյանի ֆոնդ, № 419:

42 «Սովետական Հայաստան», 1966, № 6:

43 «Սովետական գրականություն», 1966, № 4:

տաբար Մահարիի պես մաքուր մարդիկ»⁴⁴ կային: Համաստեղը նամակներից մեկում պատմում է կատարվածի մասին և ավելացնում. «Ես այդ կասկածները չեմ կրնար ըմբռնիլ, որովհետև թերությունը իրենց մեջ է և հիվանդագին: Մեզի համար էական Հայաստանն է և Հայ ժողովուրդը և ես այդ մասին խոսեցա այդ երկուքին»⁴⁵: Պարզաբանենք, որ Համաստեղը Հայաստանից եկած իր Հյուրերի հետ բաժակ էր բարձրացրել ոչ թե Խորհրդային Հայաստանի, ինչպես առաջարկել էր նրանցից մեկը, այլ Հայաստանի ու Հայ ժողովրդի պատվին:

Համաստեղը համոզված էր՝ «Հայկականությունը բան մըն է, որ համալսարանի կրթության հետ գործ չունի», իսկ Հային ու Հայկականությունը հասկանալու պայմանը հայոց լեզվի պահպանումն է, այլապես Սփյուռքում (և ոչ միայն այնտեղ) մեծանում է համալսարանական կրթություն ունեցող Հայ երիտասարդների սերունդ, որն օտար լեզուներով կամ «թերխաշ հայերենով» փորձում է հիմնավորել իր «խեղճ կարծիքը ... մեր ազգային պատմության և մշակույթին մասին առհասարակ»⁴⁶: Հայեցի կրթության այս պահանջն այսօր էլ արդիական է և՛ Սփյուռքում, և՛ Հայաստանում:

Համաստեղի դեղագիտական հայացքներն ավելի խորն ու ամբողջական արտահայտված են դեղարվեստական երկերում, հատկապես՝ պատմվածքներում: Նրա պատմվածքները հենվում են կերպարի վրա, քանի որ դրոշի ուշադրության կենտրոնում ոչ թե դեպքերն ու մարդկային փոխհարաբերություններն են, այլ հողագործ մարդիկ, որոնց կարոտի ծովից է սնվում արձակի քնարական շունչը, իսկ նրանց կյանքից ներկայացվող առանձին դեպքերն ամբողջացնում են Գյուղի պատկերը:

АМАСТЕХ О ЛИТЕРАТУРЕ

МАРГАРИТА ХАЧАТРЯН

Резюме

Амастех (Амбарцум Келенян, 1895–1966) – выдающийся представитель армянской литературы диаспоры. Его статьи и рецензии, выступления, письма помогают понять критерии, которыми он руководствовался при определении главных ценностей своего творчества и при критической оценке творчества своих коллег. Предметом его особого внимания было литературное наследие знаменитых армянских писателей-классиков, а также произведения его современников, многим из которых в течение десятилетий он оказывал поддержку. Амастех пристально следил за развитием армянской советской литературы, ценил ее достижения, не поддаваясь навязываемым ему партийным, политическим требованиям. Источником вдохновения Амастеха до конца жизни был род-

44 ԳԱԹ, Հ. Խաչմանյանի ֆոնդ, № 419:

45 Նույն տեղում:

46 «Հայրենիք», 1963, սեպտեմբերի 10:

ной народ, а несбывшейся мечтой было желание вернуться на родину предков. Требования, предъявляемые Амастехом к национальной литературе, актуальны и сегодня. Эстетические взгляды писателя более глубоко и целостно отражены в его литературных произведениях, особенно в рассказах.

HAMASTEGH ABOUT LITERATURE

MARGARET KHACHATRYAN

S u m m a r y

Hamastegh (Hambartzum Kelennyan, 1895 – 1966) is the outstanding representative of the Armenian literature of diaspora. Though he was not involved into the creation process of literary criticism works, but his articles, reviews, presentations and letters made it possible to understand the criteria which he was guided by, while determining the main values of his works and while estimating critically the works of his colleagues. He paid a special attention to the literary heritage, left by the famous Armenian classic-writers as well as to the works of his contemporaries many of whom during decades enjoyed his support and promotion. Hamastegh had always a keen interest in the growth of the Armenian Soviet literature being deeply inspired by its literary values. The Armenian people served the source for his inspiration and he kept adherence to his principals till his last days, he never met the political and party requirements, dictated him, and in his vain dreams he always wished to come back to the motherland of his parents. The demands submitted by Hamastegh to the national literature are still being actual and for today. The writer's aesthetic views more deeply and completely find their reflection in his literary works especially in his short stories.